

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական ապրանքների արտահանման դիմաց ստացվող միջոցների՝ փողերի լվացման տեսանկյունից ռիսկայնության վերաբերյալ

Նախաբան

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց կողմից գյուղատնտեսական ապրանքների արտահանման դիմաց արտերկրից ստացվող փոխանցումների վերաբերյալ 2015-2016թթ. ընթացքում պարբերաբար ստացվող կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև դրանցում ներգրավված միջոցների ծավալները՝ ՖԴԿ կողմից իրականացվել է վերլուծություն վերոնշյալ գործարքներում առկա փողերի լվացման՝ ռիսկը գնահատելու և հաշվետու անձանց համապատասխան ազդակ հաղորդելու համար: Վերլուծությունը կատարվել է այդ գործարքների՝ ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխանության կամ, որ նույնն է, հարկերից խուսափելու հնարավոր վարկածի ուղղությամբ՝ հաշվի առնելով այլ վարկածների ցածր իրատեսականությունը: Մասնավորապես, դիտարկվել է, թե ֆիզիկական անձանց կողմից գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը և իրացումը, առուվաճառքը կամ վերավաճառքը, այդ թվում՝ այլ երկրներ արտահանումը ինչ հարկային պարտավորություններ կարող են առաջացնել, որոնցից խուսափելու համար այդ անձինք կարող են հակված լինել թաքցնել կամ ոչ թափանցիկ ձևով կազմակերպել համապատասխան ֆինանսական հոսքերը:

Սահմանումը և առարկան

Համաձայն «Եկամտային հարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքների համապատասխանաբար 8-րդ և 36-րդ հոդվածների՝

«Գյուղատնտեսական արտադրանք են համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող՝

- 1) հացահատիկային և հացահատիկաղլոռային մշակաբույսերը.
- 2) տեխնիկական մշակաբույսերը.
- 3) պալարապտղային, բանջարաբոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը.
- 4) դաշտային մշակման կերային մշակաբույսերը.

¹ Նշված տեսակի գործունեությանն առնչվող՝ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը գնահատվել է շատ ցածր՝ հաշվի առնելով 2014 թվականին կատարված ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքները, այդ թվում՝ տեղական և արտասահմանյան գործընկերներից այդ մասով երբևէ ստացված ազդակների բացակայությունը:

- 5) կերարտադրության այլ արտադրանքը.
- 6) պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը.
- 7) ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը.
- 8) ծառերի և թփերի սածիլները.
- 9) ծառերի և թփերի տնկիները.
- 10) անասնաբուծության արտադրանքը.
- 11) խոզաբուծության արտադրանքը.
- 12) ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը.
- 13) թռչնաբուծության արտադրանքը.
- 14) ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը.
- 15) եղջերաբուծության և ուղտաբուծության արտադրանքը.
- 16) ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը.
- 17) ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը»:

Ընդ որում՝ հատկանշական է, որ ՖԴԿ տեսադաշտում պարբերաբար հայտնվող խեցգետնագործությունը թեև այս հոդվածներում ներառված չէ, այնուամենայնիվ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի նախագահի 23.02.2013թ. N3 պաշտոնական պարզաբանման, որպես ձկնաբուծության արտադրանք նշվում են կենդանի ձկները և այլ ջրային կենդանիները:

Այլ դեպքերով ՖԴԿ տեսադաշտում հայտնված գործերի հիմնական ուղղություն կարելի է առանձնացնել պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքի արտահանումը:

Արտադրությունը և իրացումը

Ֆիզիկական անձանց կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքը իրացնելու արդյունքում ձևավորվող հասույթի նկատմամբ կիրառվում է հետևյալ հարկային կարգավորումը. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հարկվող օբյեկտի² որոշման ժամանակ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկ վճարողի համախառն եկամուտը սույն հոդվածով սահմանված կարգով նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով...»: Սա նշանակում է, որ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ֆիզիկական անձինք (գյուղացիները), այդ թվում՝ անհատ

² Հարկվող օբյեկտը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հարկվող եկամուտն է:

ձեռնարկատերերը եկամտային հարկով չեն հարկվում՝ իրենց կողմից արտադրված և իրացումից ստացված եկամտի մասով:

Իրավաբանական անձինք նույնպես իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքը իրացնելիս դրա դիմաց ստացված եկամտի համար շահութահարկ չեն մուծում, քանի որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ «Շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի ... մասով ...»:

Առուվաճառքը կամ վերավաճառքը

Այն դեպքում, երբ գյուղատնտեսական արտադրանք արտահանող ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) ոչ թե այդ ապրանքների արտադրողն են, այլ զբաղվում են ՀՀ-ում արտադրված գյուղատնտեսական ապրանքների առուվաճառքով, դա կարող է համարվել ապօրինի ձեռնարկատիրություն, քանի որ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 2-րդ հոդվածի համաձայն՝ «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

Մյուս կողմից, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված են ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում տուգանքի չափերը, սահմանված է, թե հարկային օրենսդրության առումով ինչը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեություն (անձնական գույքի օտարում, գույքը վարձակալության հանձնելը և այլն), ինչպես նաև նշվում է, որ՝ «Սույն հոդվածը չի կիրառվում՝ ... բ) անմիջականորեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ գործունեության այդ մասով»:

Հետևաբար, անմիջականորեն գյուղատնտեսական արտադրությամբ չզբաղվող ֆիզիկական անձանց (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) կողմից գյուղատնտեսական ապրանքների առուվաճառքը կհամարվի ապօրինի ձեռնարկատիրություն:

Արտահանման միջոցով իրացումը

Գյուղատնտեսական ապրանքների արտահանման կարգավորման տեսանկյունից հարկ է նշել, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «ՀՀ-ից արտահանվող ապրանքների համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանվում է զրո տոկոս ...»: Այսպիսով, ինչպես

Ֆիզիկական, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի, այնպես էլ իրավաբանական անձանց կողմից ՀՀ-ից ցանկացած երկիր գյուղատնտեսական ապրանքների արտահանման դեպքում մաքսատուրք չի գանձվում:

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով³ սահմանված են մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների չհայտարարագրման դեպքում տուգանքի չափեր, որոնք տարբերվում են՝ կախված այն հանգամանքից, թե արդյունքում առաջացել է կամ չի առաջացել մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում: Հետևաբար, արտահանման դեպքում գյուղատնտեսական ապրանքները պետք է հայտարարագրվեն՝ անկախ այն հանգամանքից, որ մաքսատուրքի դրույքաչափը զրո է:

Ինչ վերաբերում է արտահանման դեպքում առաջացող հարկային պարտավորություններին, թեև «Եկամտային հարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքների՝ նախորդ բաժնում թվարկված պարբերություններում արտահանումն ուղղակիորեն չի նշվում, այնուամենայնիվ «իրացումը» վերաբերում է թե ՀՀ տարածքում, թե դրանից դուրս իրացմանը: Հետևաբար, արտահանման միջոցով իրացման արդյունքում ստացվող ֆիզիկական և իրավաբանական անձանց եկամուտը հարկման ենթակա չէ: Սակայն այստեղ հատկանշական հանգամանք է այն կարգավորումը, որ տվյալ դեպքում **իրացմամբ պետք է զբաղվի արտադրողը**: Այսինքն, այն դեպքերում, երբ գյուղատնտեսական արտադրանք արտահանող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը զբաղվում է գյուղատնտեսական արտադրանքի առուվաճառքով, այլ ոչ թե արտադրությամբ, պետք է վճարի շահութահարկ կամ եկամտային հարկ և/կամ շրջանառության հարկ:

Փողերի լվացման ռիսկը

Գյուղատնտեսական ապրանքների արտահանման միջնորդությամբ (ՀՀ-ում գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերմամբ և ՀՀ-ից արտահանմամբ) զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց գործունեությանն առնչվող փողերի լվացման ռիսկը կարելի է ցածր համարել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտահանում իրականացնելիս նշված ֆիզիկական անձինք ենթակա են մաքսային հսկողության պահանջներին, իսկ ստացվող միջոցների ծավալները առնվազն ՖԴԿ տեսադաշտում հայտնված գործառնությունների մասով ոչ էական են:

Մյուս կողմից, սակայն, հարկ է նշել, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ՀՀ-ում գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերման և ՀՀ-ից արտահանման գործառնությունները կարող են իրականացնել նույն գործունեությամբ զբաղվող՝ իրենց հետ փոխկապակցված իրավաբանական անձի կամ անհատ

³ Ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ դրանց հայտարարագրելը ոչ իրենց անվանմամբ:

ձեռնարկատիրոջ գործունեության շրջանակներում՝ այդպիսով թաքցնելով իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ շրջանառության իրական ծավալները: Հնարավոր է նաև, որ գյուղատնտեսական ապրանքների արտահանումն իրականացվի իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից, սակայն համապատասխան ֆինանսական հոսքերը կազմակերպվեն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հաշիվներով՝ այդպիսով ևս նպատակ հետապնդելով խուսափել հարկերից:

Եզրակացություն

Այսպիսով, գյուղատնտեսական ապրանքների **արտադրությամբ զբաղվող** ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի, և իրավաբանական անձանց կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքը արտահանման միջոցով իրացնելիս ինչպես մաքսատուրք, այնպես էլ ուղղակի և անուղղակի հարկեր չեն մուծում⁴, հետևաբար նշված դեպքերում փողերի լվացման ռիսկ առկա չէ, իսկ գյուղատնտեսական ապրանքների **արտադրությամբ չզբաղվող** անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից գյուղատնտեսական ապրանքների արտահանման դեպքում փողերի լվացման ռիսկը ցածր է, եթե.

- Այդ ֆիզիկական անձինք փոխկապակցված չեն նույն գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հետ, և
- Արտահանման դիմաց ստացված միջոցները չեն գերազանցում տարեկան կտրվածքով որոշակի ուղենիշային սահմանաչափը⁵:

Այնուամենայնիվ, չի բացառվում, որ որոշ անձանց կողմից գյուղատնտեսական ապրանքների արտահանման և իրացման քողի ներքո կատարվեն փողերի լվացման տեսանկյունից բարձր ռիսկային գործարքներ⁶: Նման դեպքերի կանխարգելման գործում մաքսային մարմիններից զատ դերակատարություն կարող են ունենալ ֆինանսական հաստատությունները՝ հավելյալ պատշաճ ուսումնասիրման շրջանակներում պահանջելով համապատասխան փաստաթղթեր և իրականացնելով վերլուծություն, մասնավորապես.

⁴ Բացառությամբ շրջանառության հարկ վճարող իրավաբանական անձանց (շրջանառությունը 115 միլիոն դրամը չգերազանցելու դեպքում). «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի («Հարկային արտոնությունների կասեցումը») համաձայն «Շրջանառության հարկ վճարողների համար սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով կասեցվում են ԱԱՀ-ի և շահութահարկի գծով հարկային օրենսդրությամբ սահմանված արտոնությունները»: Ուստի, եթե գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձը համարվի շրջանառության հարկ վճարող, ապա 3,5% դրույքաչափով (արտադրական գործունեությունից եկամուտներ) պետք է վճարի շրջանառության հարկ:

⁵ Որը կարելի է նույնացնել շրջանառության հարկ վճարող համարվելու նպատակով սահմանված 115 միլիոն դրամ սահմանաչափի հետ:

⁶ Օրինակ՝ բարձր ռիսկային երկրներից պարբերաբար ստացվող փոխանցումների տեսքով:

- Պարզել՝ արդյոք ֆիզիկական անձը զբաղվում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ և իրացմամբ, թե բացառապես առուվաճառքով կամ վերավաճառքով, այդ թվում՝ արտահանման միջոցով,
- Պահանջել մաքսային և այլ փաստաթղթեր արտահանված գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ,
- Պարզել ֆիզիկական անձանց կապը գյուղատնտեսական ապրանքներ արտահանող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի հետ,
- Գնահատել արտահանվող գյուղատնտեսական արտադրանքի դիմաց փոխկապակցված անձանց կողմից ստացվող միջոցների ծավալները՝ համեմատելով ուղենիշային սահմանաչափի հետ: